Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 10

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Սաֆարյանը և Ա. Ներսիսյանը, օգնական Ն. Գևորգյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, աշխատակազմի բաժինների պետերը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. <<Արագածոտն>> ՋՕԸ-ին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> և <<Կարբի համայնքի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ները լուծարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
5. Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերի մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
6. Համայնքային սեփականություն հանդիսացող գրքերն անվճար, անհատույց տրամադրելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
7. Աշտարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

13. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

14. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

15. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

16. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում:

Զեկուցողը նշեց, որ նշված որոշման նախագծի անհրաժեշտությունը կայանում է բյուջեում նոր տողերի ավելացմամբ, ինչն իր հերթին հնարավորություն կտա ֆինանսավորելու համապատասխան աշխատանքները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - <<Արագածոտն>> ՋՕԸ-ին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց հիմք ընդունելով <<Արագածոտն>> ՋՕԸ տնօրենի գրությունը համաձայնություն տալ՝ Աշտարակ համայնքի ոռոգման ցանցերի 2022թ. գարնան նախապատրաստական աշխատանքներ կատարելու և ոռոգման սեզոնը սկսելու համար, ոռոգման փակ ցանցերի փականների ձեռք բերման նպատակով ՋՕԸ-ին երկու միլիոն ՀՀ դրամ գումարի ֆինանսական աջակցություն տրամադրելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18-ԿՈՂՄ, 2-ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> և <<Կարբի համայնքի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ները լուծարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին կետի, 68-69-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի, 13-րդ հոդվածի 2-րդ կետի «զ» և «է» ենթակետերի, նույն հոդվածի 3-րդ կետի, 25-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի և 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի պահանջներով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով լուծարել «Աշտարակի կոմունալ ծառայություն» և «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (այսուհետ՝ ՀՈԱԿ)՝ այդ մասին տեղեկացնելով իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին: Համայնքի ղեկավարին վերապահել լուծարման հանձնաժողով (լուծարող) նշանակելու լիազորությունը: Հանձնարարել լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կազմել միջանկյալ և լուծարման հաշվեկշիռները և ներկայացնել ավագանու հաստատմանը: «Աշտարակի կոմունալ ծառայություն» և «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ների գույքերը /ըստ գույքագրման արդյունքների/ հանձնել Աշտարակ համայնքին:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերի մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ և 102-րդ հոդվածի 4-րդ կետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկին և <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ին՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի: Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքին և նրա բնակավայրերին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերի տրամադրման մասին նախկինում ընդունված բոլոր իրավական ակտերը: Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 6 - *Համայնքային սեփականություն հանդիսացող գրքերն անվճար, անհատույց տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ և 102-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, համայնքային սեփականություն հանդիսացող գրքերն անվճար, անհատույց սեփականության իրավունքով տրամադրել դպրոցներին: Ըստ անհրաժեշտության իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող գրքերի փորձաքննություն և դրանց արդյունքների հիման վրա ապահովել սույն որոշման 1-ին կետի կատարումը: Փորձաքննության արդյունքում ոչ պիտանի ճանաչված գրքերը հանձնել վերամշակման /մակուլատուրա/ կամ խոտանման:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 7 - *Աշտարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի կազմը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց հիմք ընդունելով 02.06.2016թ. ՀՀ Կառավարության N 631-Ն որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝ բաղկացած 6 անդամից՝ հանձնաժողովի նախագահ Զոհրակ Ամիրյան, անդամներ՝ Արթուր Հովհաննիսյան, Աննա Տոնյան, Աստղիկ Աղաբաբյան, Ավիկ Ազիզյան, Լիանա Խեչանյան:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հաջորդ հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալուն և մեկնարկային գին սահմանելուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն /692-041 ծածկագրից/ ուղղակի վաճառքով օտարելուն:

Զեկուցողը նշեց, որ նշված հողամասը վարձակալության իրավունքով տրված է եղել միևնույն քաղաքացուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց,

համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն/ 687-001 ծածկագրից/ ուղղակի վաճառքով օտարելուն:

Զեկուցողը նշեց, որ նշված հողամասը վարձակալության իրավունքով տրված է եղել միևնույն քաղաքացուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն /854-002 ծածկագրից/ ուղղակի վաճառքով օտարելուն:

Զեկուցողը նշեց, որ նշված հողամասը վարձակալության իրավունքով տրված է եղել միևնույն քաղաքացուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող թվով 7 հողամասերն ուղղակի վաճառքով օտարելուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը և Մ. Մկրտչյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները, համաձայնություն համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ գյուղ. նշանակության հողամասերում գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համաձայնություն տալ գյուղատնտեսական արտադրական նշանակության փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Տ Ի Ն – 15 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և ՀՀ կառավարության N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջներով, հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Տ Ի Ն – 16 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2022 թվականի մայիսի 11-ը, ժամը՝ 17:00-ին:

Նիստի կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր.7:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի ապրիլի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____

ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____

ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____

ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ